

ԼԵՎՈՆ ՏԵՐ-ՊԵՏՐՈՍՅԱՆ

ԵՓՐԵՄ ԱՍՈՐՈՒ «ՀՈՐԻ ՄԵԿՆՈՒԹՅՈՒՆԸ»
ԵԶՆԻԿ ԿՈՂԲԱՑՈՒ ԱՂԲՅՈՒՐՆԵՐԻՑ

Ասորական գրականության մեծագույն ներկայացուցիչ Եփրեմ Ասորու (մահ. 373 թ.) «Հորի մեկնության» սկզբնագիրը չի պահպանվել։ Ասեմանիների հրատարակած ասորերեն բնագիրը¹ հետազոտողների կողմից հաստատապես անվավեր է համարվում²։ Մեկնության հայերեն թարգմանությունը նույնպես, դժբախտաբար, ամբողջությամբ մեզ չի հասել։ Սակայն բավականին ընդարձակ մի հատված, որն ընդգրկում է Եփրեմի ներածությունը և Հորի գրքի Ա, 1—12 համարների մեկնությունը, պահպանվել է Գրիգոր Աբասա որդու (մահ. 1220/1 թ.) «Պատճառաց գրքում»։ Այդ հատվածը խնամքով հրատարակված է Ա. Վարդանյանի կողմից Վիեննայի Մխիթարյան մատենադարանի ձեռագրերի հիման վրա³։

Եփրեմի երկը՝ Որոգինեսի, Իսիբիոս Երուսաղեմացու, Եվազր Պոնտացու, Ստեփանոս Սյունեցու և Դավիթ Քորայրեցու նույնաբնույթ գրվածքների կողքին բաղվածաբար ընդգրկված է նաև Հովհաննես Վանականի (1181—1251 թթ.) «Հորի մեկնության» մեջ⁴։ Սակայն, ինչպես համոզիչ կերպով ցույց է տվել Ա. Վարդանյանը, Եփրեմի աշխատությունը Վանականի կողմից որոշ կրճատումների ու փոփոխությունների է ենթարկվել⁵։ Ուստի այս բնագրի օգնությամբ ևս անհնար է վերականգնել Եփրեմ Ասորու մեկնության ամբողջական տեսքը։ Այնուամենայնիվ, պահպանված հատակոտորները, մանավանդ «Պատճառաց գրքի» ընդարձակ բաղվածքը, հնարավորություն են տալիս որոշակի պատկերացում կազմել այդ մեծարժեք երկի հայերեն թարգմանության մասին։

¹ *Sb' u Sancti Patris nostri Ep'iraem Syri Opera omnia*, t. 2, Syriace et latine. Romae, 1740, p. 1—19.

² *Sb' u Ch. Renoux*, Vers le Commentaire de Job d'Ephrem de Nisibe, „Parole de l'Orient“, vol. VI—VII, 1975—1976, p. 63.

³ *Sb' u Ա. Վարդանյան*, Սրբոյն Եփրեմի Մեկնութիւն և սկիզբն Յորայ (Ա. Վարդանյանի «Դասական մանր բնագիրներ և ձեռագրական համեմատութիւններ» գրքում, Վիեննա, 1913), էջ 81—94։

⁴ Վանականի մեկնության մասին մանրամասն տե՛ս *Ch. Renoux*, Hésychius de Jérusalem, Homélie sur Job, „Patrologia Orientalis“, t. 42, fasc. 1, No 190, Brepols-Turnhout, 1983, p. 18—19.

⁵ *Sb' u Ա. Վարդանյան*, Սրբոյն Եփրեմի Մեկնութիւն..., էջ 68—71։ Վանականի մեկնությունից եփրեմյան մի հատված հրատարակել է Ծ. Ռընուն Ֆրանսերեն թարգմանությամբ, տե՛ս *Ch. Renoux*, Vers le Commentaire, p. 65—68.

Եփրեմ Ասորու «Հորի մեկնությունը» հայ թարգմանական գրականության հնագույն հուշարձաններից է. հնություն հիմնական ապացույցը, Ա. Վարդանյանի արտահայտություններ, «լեզուական ամենայնպես ցուցումը, այսինքն եփրեմեան գործոց դասական հայերէնն» է⁶: Իսկապես, հայերեն թարգմանության լեզուն աչքի է ընկնում ընտիր հայկաբանությամբ և դասական գրաբարին բնորոշ վայելուչ ոճով: Դրանում կարելի է համոզվել, ծանոթանալով թեկուզ հետևյալ փոքրիկ հատվածին. «Եղեն արարածք դարմանիչք մարմնոց մերոց, եղեն և գիրք դարմանիչք հոգոց մերոց: Եւ որպէս գոն յամենայն աշխարհի բիւր բարիք, և ոչ բռնութեամբ գան մտանեն ի բերան մարդոյ և դարմանեն զնա, այլ ինքն կամաւ իւրովք բանայ զգուռն բերանոյ իւրոյ և վայելէ ի ճաշակսն, որ ուրախ առնէ զնա, սոյնպէս և ըստ սմին արինակի գոն ի գիրս ամենայն բարութիւնք. և ոչ բռնութեամբ մտանեն ի հոգիս կենդանի բանքն և իմաստնացուցանեն զմիտս, այլ ինքն իշխանական կամաւք բանայ զգուռն լսելեաց իւրոց և ընդունի զնոսա ի միտսն»⁷:

Եփրեմի մեկնության՝ «Պատճառաց գրքում» պահպանված հատվածում կարելի է մատնանշել միայն հետևյալ ասորարանությունները.

6—Ի ձեռն (=b—yd)⁸.

50—ամենայն մարդ (=kl 'nš)⁹.

64, 78—յերկիր յԱւծ⁹ (=b- r' d-'wš) Աստվածաշնչի հայերեն բնագրում ունենք յԱսիդ աշխարհի ընթերցվածք (=ἐν γῶραι τῆ Αυσίτιδι).

65, 127—այս ինքն (=hnw=hn' hw).

67—զուարթուն (=y'r').

72—կանխեաց դրոշմեաց (=qdm ršm).

100—Յոր, որ բազցր էին ճառագայթք ողորմութեան նորա փխ Յոր, ճառագայթք ողորմութեան որոյ բազցր էին.

152—կանխեաց զրկեաց (հմմտ. տ. 72).

226—խաւսել կալաւ փխ խաւսել սկսաւ.

228—պատերազմ է այս մեծ և սաստիկ, որ կարգի անուն նորա յամենայն դարս փխ... որոյ անուն կարգի յամենայն դարս (հմմտ. տ. 100).

247—զուստր ձախոյ (=brt sml').

302/4—սատանայ էջ եկաց ի մէջ պատերազմին, որոյ նման է գալուստն իւր Յուդայի փխ... որոյ գալուստն նման է Յուդայի.

306—սաստեաց ի նոսա (k" b-hwn) փխ սաստեաց նոցա.

Ասորարանություն պետք է համարել նաև տէր բառով կազմված հետևյալ բառակապակցությունները. տէր նաշոյս (33), տէր մարտին (47), տէր դրախտին (125):

6 Ա. Վարդանյան, Սրբոյն Եփրեմի Մեկնութիւն..., էջ 64:

7 Նույն տեղում, էջ 81:

8 Քաղվածքների սկզբում գրված թվերով նշանակվում են Ա. Վարդանյանի հրատարակության տողահամարները:

9 Ա. Վարդանյանն ուղղել է յնւծ:

«Պատճառաց զբքի» հնագույն բնօրինակությունը (ԺԳ դ.), ինչպես հայտնի է, պահվում է Մաշտոցի անվան Մատենադարանում 1879 համարի տակ¹⁰: Քանի որ Ա. Վարդանյանը հնարավորություն չի ունեցել օգտվելու այդ բնօրինակությունից, հարկ ենք համարում ստորև ներկայացնել վերջինիս տարբերակվածները նրա հրատարակության նկատմամբ¹¹.

- 7 յեզուն փխ զեզուն
 9 զիրք փխ իրք
 11 դարմանիչ փխ դարմանիչք
 12 քանզի փխ որպէս
 12 աշխարհէ փխ աշխարհի
 13 բիւրք փխ բիւր
 16 ճաշակն փխ ճաշական
 26 կերէք փխ կերայք
 26 կերակրոց փխ կերակրոյ
 29 սիրոյ սեղանի փխ սեղանոյ
 30 բերանոց փխ բերանոյ
 35 զնա փխ զնոսա
 35 առաջի ի վերայ փխ ի վերայ
 37 ողորմութիւնն... մեծութիւնն փխ ողորմութիւն... մեծութիւն
 52 լինին փխ լիցին
 59 իմաստացուցիչք փխ իմաստնացուցիչք
 64 յաւծ փխ յմւծ
 66 երկիր յերկրէ փխ յերկրէ
 76 գոն... ազգականք փխ գոյ... ազգական
 78 յաւծ փխ յմւծ
 89 շի՛ք զձեզ
 94 շի՛ք հաշէր
 99 շարս փխ շարիս
 108 կողմնս փխ կողմն
 108 աշխատիլ փխ աշխատել
 111 զաւրութեամբն փխ զաւրութեամբ
 112 որ փխ որք
 113 խաւարային փխ խաւարին
 118 ի յոստս փխ յոստս
 119 կատաղութեանն փխ կատաղութեան
 120 ապաւինութենէն փխ յապաւինութենէն
 136 մոլարքն փխ մոլարք
 138 զերկոսեան փխ զերկոսեանն
 146 շար մտաց փխ մտաց
 158 դժառա[-] հետին գրչով] փխ ծառայ
 172 զեկս փխ զերկս
 176 եռանդան փխ եռանդեան
 183 վաճառոց փխ վաճառաց

10 Եփրեմի մեկնության հատվածն զբաղեցնում է ձեռագրի 67բ—74բ էջերը:

11 Ուղղագրական տարբերությունները շինք նշում:

- 189 հէնան փխ հէնս
 197 ասաց փխ ասէ
 202 շի՛ և
 204 յայտնի եմոյծ փխ եմոյծ
 210 էր փխ են
 211 ստին փխ սատանային
 211 ակնարկեսցէ և փխ և ակնարկեսցէ
 213 ակնառու փխ ակնառու
 217 ստութեանն փխ ստութեան
 219 առաքինութեանց փխ առաքինութեան
 220 ել փխ և
 220 և առ փխ էառ
 223 զբանակս փխ զբանակն
 224 ամենեքեան փխ ամենեքին
 233 շի՛ և
 235 խորամանկութիւնդ փխ խորամանկութիւնք
 240 վարութանակք իմ ապականիչք փխ զվարութանակս իմ ապա-
 կանիչս
 243 յոճակք խաւարեայք փխ յոճակս խաւարեայս
 247 ձորամուտ փխ ձորամուտս
 262 խորանք փխ խարանք
 263 բազմաւքն փխ զբազումսն
 270 նմա փխ ի նմա
 273 վարդապետութեամբն փխ վարդապետութեամբ
 280 երկինք երկրորդ փխ երկինք
 284 առաւել փխ և առաւել
 285 նիզակաւք իւրովք փխ նիզակաւք
 290 յայտնեցին յետոյ փխ յայտնեցին
 291 իւրեանց փխ միմեանց
 296 մի իւր փխ մի
 299 իբրև փխ որպէս
 302 զաւրաւքն փխ զաւրաւք
 307 զաւրութիւնն փխ զաւրութիւն
 308 երթեալ փխ երթալ
 309 ամաշեսցէ փխ ամաշեաց
 310 խաշահանութն փխ խաշահանունքն
 321 սովորութեանն փխ սովորութեան
 325 արժանատրեցաւ փխ արժանի եղև
 326 ի ցեղէն փխ ի ցեղէ
 329 որդւոցն փխ որդւոյն
 330 մայրն փխ մայր
 330 հինգերորդ փխ երրորդ
 342 առաքինութիւնն փխ առաքինութիւն
 343 անունն փխ անուն
 347 զհամբերութիւնն փխ զհամբերութիւն

350 և ընդ փխ ընդ

354 շի՛ք յաւիտենից ամէն:

Նշված տարբերությունները հիմք են տալիս որոշ սրբագրություններ կատարելու Ա. Վարդանյանի հրատարակած բնագրում: Այսպես.

8—10. Տպագրված է՝ «ամենայն իրք աւգտակարք տան զամենայն աւգնութիւնս ի դարմանս ոգւոց մերոց». պետք է ուղղել՝ «ամենայն գիրք աւգտակարք...»:

120. Տպագրված է՝ «հալածեսցին թռչունք յիրեանց յապաւինութենէն». պետք է ուղղել՝ «հալածեսցին թռչունք յիրեանց ապաւինութենէն»:

140. Տպագրված է՝ «վասն (զի) հպարտացաւ». պետք է ուղղել՝ «վասն զի հպարտացաւ»:

145/6. Տպագրված է՝ «ի կորուստ եւ ի պարտութիւն մտաց նորա». պետք է ուղղել՝ «ի կորուստ եւ ի պարտութիւն շար մտաց նորա»:

204/5. Տպագրված է՝ «աշաւք տեսանէին, զի եմոյժ զնա ի մարտն». պետք է ուղղել՝ «աշաւք տեսանէին, զի յայտնի եմոյժ զնա ի մարտն»:

220. Տպագրված է՝ «եւ սատանայ պարծելով էառ հրաման». պետք է ուղղել՝ «եւ սատանայ պարծելով եւ առ հրաման»:

262/3. Տպագրված է՝ «զի թէ միայն էր, շէին յոյժ մեծ խարանք նորա, այլ մեզ այն շար է, զի զբազումսն խարէ». պետք է ուղղել՝ «...զի բազմաւքն խարէ»:

269/70. Տպագրված է՝ «եթէ կամիմ ձգել ի նա զնետս իմ, լինի ի նմա իրբեւ զվահան ընդզէմ երեսաց նորա». պետք է ուղղել՝ «...լինի նմա իրբեւ զվահան...»:

279/80. Տպագրված է՝ «արար ինձ զերկիրս երկինք». պետք է ուղղել՝ «արար ինձ զերկիրս երկինք երկրորդ»:

284/5. Տպագրված է՝ «խոցոտեաց եւ զձեզ սաստիկ նիզակաւք եւ ձգեաց զնետս իւր զեղեալս». պետք է ուղղել՝ «խոցոտեաց եւ զձեզ սաստիկ նիզակաւք իւրովք...»:

290/1. Տպագրված է՝ «ասպա յայտնեցին միմեանց զամբարշտութիւնս միմեանց». պետք է ուղղել՝ «ասպա յայտնեցին միմեանց զամբարշտութիւնս իւրեանց»:

Մի ուղղում էլ առաջարկում ենք հակառակ «Պատճառաց գրքի» բոլոր հայտնի ձեռագրերի ընթերցման: Ա. Վարդանյանի հրատարակության 135/7 տողերում կարդում ենք. «Առանց պատասխանիս տալոյ գոցին ուսմունքն մոլարք, որ ասեն եթէ իշխանութիւն ունի նա [սատանայ] բնութեամբ»: Բնութեամբ բառը, մեր կարծիքով, պետք է դարձնել բռնութեամբ¹², որ հաստատվում է Հովհաննես Վանականի մեկնության տվյալներով¹³:

Ինչպես վերը նշվեց, Եփրեմ Ասորու «Հորի մեկնության» հայերեն թարգմանությունը, դատելով նրա լեզվի դասական բնույթից, պետք է դասվի Եփրեմի երկերի մյուս հայերեն թարգմանությունների շարքում, որոնք կատարվել են հիմնականում V դ. առաջին տասնամյակներին: Բարերախտարար այս ընդհանուր դատողությունն ամրապնդվում է մի ավելի որոշակի փաս-

¹² Ասորական բնագրում հավանաբար եղել է զԿՐԴՄ բառը:

¹³ Հմմտ. Ա. Վարդանյան, Սրբոյն Եփրեմի Մեկնություն..., էջ 86, տողատակ: Ստորև կտեսնենք, որ դա հաստատվում է նաև Եզնիկ Կողբացու «Յո՞ժ ազանդոց» երկի բնագրով:

տարկով, որը կապված է Եզնիկ Կողբացու «Եղծ աղանդոց» երկի աղբյուրների քննության խնդրի հետ:

Եզնիկ Կողբացու աղբյուրների քննության հարցով հիմնավորապես զբաղվել են երկու հետազոտողներ՝ Գ. Գալեմբերյանը¹⁴ և Լ. Մարիեսը¹⁵: Հիմնականում նրանց ջանքերով վեր են հանվել Եզնիկի հետևյալ աղբյուրները՝ Արիստիդես Աթենացու «Ջատագովութիւնը», Մեթոդիոս Ողիմպիացու «Վասն անձնիշխանութեան» (Περὶ ἀντιστοιχείων) երկը, Բարսեղ Կեսարացու «Վեցօրեայքը», զբնականությունը նվիրված մի աշխատություն՝ թարգմանված պահլավերենից ասորերեն, Եպիփան Կիպրացու «Ընդդէմ հերձուածոց» երկը, Գիողորոս Տարսոնացու մի աշխատությունը և, վերջապես, հակամարկիոնական մի գրվածք, որն օգտագործել են Եփրեմ Ասորին և Եզնիկը: Լ. Մարիեսի կարծիքով՝ Եզնիկը ուղղակի կամ անուղղակի կերպով օգտվել է նաև Որոգինեսի, Աքիլևսի, Իրենեոսի, Ադամանտիոսի, Գրիգոր Նյուաացու, Հուստինոսի և Թեոդորոս Մոպսուեստացու աշխատություններից: Պետք է նկատի ունենալ, սակայն, որ «Եզնիկի գրադարանը», ինչպես նշում է Լ. Մարիեսը, չի սահմանափակվում անգամ այս պատկանելի ցանկով, աղբյուրների քննությունն անհրաժեշտ է շարունակել, «վստահ լինելով, որ Եզնիկի երկը դեռևս շատ անակնկալներ է պահպանում մեզ համար»¹⁶:

Լ. Մարիեսի պնդումը լիովին արդարացավ, երբ հայտնաբերվեց և Հ. Թորոսյանի աշխատասիրությամբ հրատարակվեց Աթեղահայ Եղեսացու¹⁷ «Թուղթ առ քրիստոնեայս Պարսից աշխարհին» երկը¹⁸: Այդ հրատարակության ներածական հոդվածում Հ. Թորոսյանը բազմաթիվ բնագրական բնդհանրություններ է մատնանշում Աթեղահայի թղթի և Եզնիկի «Եղծ աղանդոց» երկի միջև, որոնք աշխատասիրողին հիմք են տալիս նույնիսկ թարգմանությունը վերջինիս վերագրելու¹⁹:

Մենք կփորձենք ապացուցել, որ Եզնիկը, Աթեղահայի թղթից բացի, օգտագործել է նաև մի ուրիշ ասորական աղբյուր, այն է՝ Եփրեմ Ասորու «Հորի մեկնությունը»: Խոսքը վերաբերում է «Եղծ աղանդոցի» մի փոքրիկ հատվածի, որտեղ Եզնիկը քննում է «չէ սատանայ բռնաւոր և կանխագէտ» միտքը: Սատանան բռնաւոր (այսինքն՝ բռնադատող) չէ, քանի որ կարող է մարդկանց միայն զրդել, բայց ոչ բռնադատել կամ ստիպել շարիք գործելու: Նա նաև կանխագէտ չէ, քանի որ չի կարող կանխատեսել իր գործած

14 Տե՛ս Գ. Գալեմբերյան, Նորագոյն աղբերք Եզնիկայ Կողբացու Ընդդէմ աղանդոց մատենին, Վիեննա, 1919:

15 Տե՛ս L. Mariès, Le De Deo d'Eznik de Kolb connu sous le nom de „Contre les sectes“, „Revue des Etudes Arméniennes“, t. IV, 1924, p. 113—205; t. V, 1925, p. 13—124. Ընդհանուր էջակայմամբ՝ [1—206].

16 Նույն տեղում, էջ 85:

17 Աթեղահայն 324—346 թթ. եղել է Եղեսայի եպիսկոպոսը, տե՛ս R. Daval, Histoire politique, religieuse et littéraire d'Édesse, Paris, 1892, p. 138. Արեղահայ անունն ազգավորված է, հավանաբար նախապես այն հայերեն է տառադարձվել Այեթաղա ձևով (= Aytallāhā):

18 Տե՛ս «Աթեղահայ եպիսկոպոսի Ուսայի Թուղթ առ քրիստոնեայս աշխարհին Պարսից վասն հաւատոյ, ուսումնասիրեաց և ի լատին լեզու թարգմանեաց Յ. Թորոսեան», Վենետիկ, 1942:

19 Նույն տեղում, էջ 20—26:

շարիքների հետևանքները²⁰: Այս միտքն, ահա, որ հիմնավորվում է Հորի կրած փորձության օրինակով, մեր կարծիքով, Եզնիկը փոխ է առել Եփրեմ Ասորու մեկնությունից: Խնդիրը մի փոքր բարդանում է նրանով, որ մոտավորապես նույն միտքը, թեև այլ ձևակերպմամբ, գտնում ենք նաև Աթեղահայի հիշյալ թղթում: Ուստի հարկ ենք համարում համադրաբար բերել բոլոր երեք բնագրերն էլ.

Աթեղահա²¹

Եփրեմ²²

Եզնիկ²³

Եւ ոչ զաբուփիւն ինչ բանաւոր է սատանայ, թէ բանաբար ինչ ապստամբեաց եւ կամ թէ բանի զօր վարիցէ ի շարիս, այլ պատրանաւք եւ գրգռելով. եւ վկայ զի ասէինն. «Զի՞ կայ մեր եւ քո, Յիսուս որդի Աստուծոյ, եկիր տաբաժամ կորուսանի՞լ զըմեզ»²⁵: Եւ զի ոչ բանի վարէ զօր ի շարիս, այլ որպէս եւ որչափ առնուհրաման՝ այնչափ փորձէ, ի փորձութեանցն իմանամք, որովք փորձեաց զՅովք. զի ոչ որպէս եւ կամեցաւ փորձեաց, այլ որպէս եւ առ հրաման, եւ զի ոչ աւելի քան զըկար մարդկան փորձէ

Առանց պատասխանիս տալոյ գտցին ուսմունքն մուարբ, որ ասին եթէ իշխանութիւն ունի նա բանութեամբ²⁴, զի ահա մարտին, զոր արար ընդ Յորայ, ունիմք զերկոսեանն, զի տկար է եւ անզէտ. տկար է՝ վասն զի խնդրեաց զհրամանն, եւ անզէտ՝ վասն զի հրպարտացաւ, զի թէ զիտացեալ էր, թէ ինքն յաղթի ի պատերազմին, ապա ոչ բնաւ մարտընչէր: Ապա եթէ մարտեաւ առ յոյս եթէ յաղթեմ, ոչ որպէս կարծեացն զիպեցաւ նմա: Բազումք են որ պարտաւորին յամաթ մեծացուցչաց նորա եւ (հը-

Դարձեալ և ի Յորայ փորձանացն է ուսանել՝ թէ չէ սատանայ բանաւոր և կանխազէտ: Զի եթէ բանաւոր որ ինչ էր նա, ոչ յԱստուծոյ խնդրեալ առնոյր աւճան և ապա մխէր ի փորձութիւնսն: Եւ եթէ կանխազէտ էր, ոչ մատչէր փորձել. քանզի զիտէր՝ թէ յորժամ ոչ կարէ յաղթել, յամաթ լինելոց է:

20 Ի դեպ, այս երկու բառերը «Եղծ աղանդոցի» աշխարհաբար բնագրում սխալմամբ թարգմանված են «զորավոր ու կանխազուշակ» (Եզնիկ Կողբացի, Եղծ աղանդոց. թարգմանությունը, ներածությունը և ծանոթագրությունները Ա. Ա. Աբրահամյանի, Երևան, 1970, էջ 66): Զորավոր-ի փոխարենն պետք էր դնել բանադատիչ բառը, իսկ կանխազուշակ-ի փոխարենն պահել զբարբալյան կանխազէտ-ը, քանի որ խոսքը ոչ թե ապագան զուշակելու, այլ այն գիտեանալու մասին է: Հիշենք, որ քրիստոնեական մտայնությամբ կանխազէտը միայն Աստված է: Նույն սխալը կատարված է նաև Եզնիկի ուսուցիչ թարգմանության մեջ, որտեղ խնդրո առարկա բառերը վերաբրտադրված են «сильный и всеведущий (ամենազեա)» ձևով (Езник Кохбацу, Книга опровержений: о добре и зле. Перевод, предисловие и примечания В. К. Чалояна, Ереван, 1968, с. 67). Մինչդեռ անհրաժեշտ էր թարգմանել «способный заставить и обладающий даром предвидения . ճիշտ թարգմանությունը ավելի է Լ. Մարիեի. «par violence s'imposant et prescient». տե՛ս Езник de Kolb, De Deo, traduction française, notes et tables par L. Mariès et Ch. Mercier, «Patrologia Orientalis», t. XXVIII, fasc. 4, Paris, 1959, p. [43].

21 «Աթեղահայ եպիսկոպոսի Ուռհայի Թուղթ...», էջ 70, 73:

22 Ա. Վարդանյան, Արբոյն Եփրեմի Մեկնություն..., տ. 135—146:

23 Езник de Kolb, De Deo, éd. critique du texte arménien par L. Mariès et Ch. Mercier, «Patrologia Orientalis», t. XXVIII/3, Paris, 1959, p. [38].

24 Ինչպես վերը տեսանք, տպագիրն ունի բնութեամբ, որը Հովհաննես Վանականի մեկնության հիման վրա ուղղվել է բնութեամբ. դա հաստատվում է Եզնիկի բնագրով, որտեղ ունենք բնաւոր բառը:

25 Հմմտ. Մատթ. Ը, 29:

դնոսա փորձիչն... եւ զի պարտութիւն) ի կորուստ
 թշ ունի կանխագիտու- եւ ի պարտութիւն շարձ²⁶
 թիւն՝ յայնմանէ յայա է, մտաց նորա:
 որ խառնիխուսն մարտըն-
 շի:

Եփրեմի մեկնությունն ու Եզնիկի երկը երեք կետում, տարբերվելով Աթեղահայի թղթից, համընկնում են իրար.

ա. Եփրեմն ու Եզնիկը նախ և առաջ միևնույն հստակ հարցադրումն են առաջ քաշում. Եփրեմի մոտ այն ձևակերպված է «(սատանայ) տկար է եւ անզէտ», իսկ Եզնիկի մոտ «չէ սատանայ բնաւոր և կանխագէտ» բառերով: Աթեղահայի մոտ այս հարցադրումը բացակայում է:

բ. Եփրեմն ու Եզնիկն այնուհետև մեկ առ մեկ քննում և բացատրում են առաջադրված հարցերը: Աթեղահայն մեկնաբանում է միայն առաջին հարցը:

գ. Թեև տաս տող հետո Աթեղահայն այնուամենայնիվ անդրադառնում է սատանայի անգիտության հարցին, բայց այն փաստարկելիս բոլորովին շեղվում է Եփրեմից ու Եզնիկից: Ըստ Աթեղահայի՝ սատանայի կանխագետ լինելը երևում է նրանից, որ նա խառնիխուսն է մարտնչում, իսկ ըստ Եփրեմի ու Եզնիկի՝ սատանան կանխագետ չէ, քանի որ նախապես չդիտեր, որ Հորին հաղթել չկարողանալով խայտառակ է լինելու. եթե դիտենար, որ պիտի պարտվի, ապա չէր մարտնչի նրա հետ:

Այսպիսով, թվում է, բավականին հիմքեր կան պնդելու համար, որ նրշված հատվածում Եզնիկն իսկապես օգտվել է Եփրեմ Ասորու «Հորի մեկնությունից»²⁷: Սույն փաստը թեև երկրորդական նշանակություն ունի Եզնիկի երկի ուսումնասիրման տեսակետից, սակայն կարևոր է Եփրեմի մեկնության հայերեն թարգմանության թվագրման համար: Թարգմանությունն, ըստ այդմ, պետք է կատարված լինի «Եղծ աղանդոցի» գրություն ժամանակից՝ 440-ական թթ. առաջ:

Л. А. ТЕР-ПЕТРОСЯН

ТОЛКОВАНИЕ ЕФРЕМА СИРИНА НА «КНИГУ ИОВА» КАК ОДИН ИЗ ИСТОЧНИКОВ ЕЗНИКА КОХБАЦИ

Резюме

В статье предпринята попытка доказать, что в состав источников «Книги опровержений» Езника Кохбаци входило также и толкование Ефрема Сирина на «Книгу Иова». Сирийский оригинал этого сочинения утрачен. Из армянского перевода сохранились только предисловие и комментарии к стихам Иов: 1, 1—12. Зависимость Езника

²⁶ Ինչպես վերը նշվեց, շատ բառը տպագրում չկա. այն ավելացրել ենք մենք Մաշտոցի անվան Մատենադարանի 1879 ձեռագրի հիման վրա:

²⁷ Դա չի բացառում, իհարկե, որ նշված տողերը գրելիս Եզնիկն աչքի առաջ է ունեցել նաև Աթեղահայի գրվածքը, մանավանդ որ այլ տեղերում բավականին օգտվել է նրանից:

от толкования Ефрема позволяет определить время осуществления армянского перевода этого сирийского сочинения. Поскольку достоверно известно, что «Книга опровержений» Езника написана в 440-х гг., значит, толкование Ефрема переведено на армянский в первые десятилетия V в.

L. A. TER-PÉTROSSIAN

LE COMMENTAIRE DE JOB D'EPHREM LE SYRIEN COMME
L'UNE DES SOURCES D'EZNIK DE KOLB

Résumé

L'article entreprend de démontrer que le Commentaire de Job d'Ephrem le Syrien fit partie des sources du „De Deo“ d'Ezник de Kolb. L'original syriaque de cette oeuvre est perdu. De la traduction arménienne subsistent seulement la préface et les commentaires de Job 1, 1—12. Le fait qu'Ezник se soit servi du Commentaire d'Ephrem le Syrien permet de préciser l'époque de la traduction arménienne de cette oeuvre syriaque. Puisqu'il est établi que le „De Deo“ d'Ezник fut écrit aux années 440, il s'ensuit que le Commentaire d'Ephrem fut traduit en arménien aux premières décennies du Ve siècle.